ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունվար, 2021 թվականի № 1-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 136-Ա որոշմամբ, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի հունվարի 8-ի N Հ.Մ./02-02-21 գրությունը, «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի հունվարի 8-ի N 02/21 գրությունը և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի հունվարի 8-ի N Ռ/21-01-01 գրությունը և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի հունվարի 8-ի N Հ.Մ./02-02-21 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2020 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական,

մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

2. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի հունվարի 8-ի N 02/21 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2020 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

3. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի հունվարի 8-ի Ռ/21-01-01 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2020 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

13 հունվար, 2021 թվականի

ք. Երևան